## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.city@mail.ru

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

26 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2022թվականի N 272-Ա

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺՆԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԸ ՎԵՐԱԲԱԺԱՆԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ, 42-րդ, 43-րդհոդվածներով, Հայաստանի Հանրապետությանկառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումով, ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի 2021 թվականի մայիսի 10-ի «Անշարժ գույքի հասցեավորման հայտի ձևը սահմանելու մասին» N 104-Լ հրամանով, հիմք ընդունելով Դսեղ գյուղի բնակիչ Ռոբերտ Խառատյանի դիմումը,անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 26082021-06-0023 վկայականը , <<ԻՆԷՔՍ>> ՍՊԸ-ի կողմից տրված հատակագծերը և համայնքային ծառայության առաջին կարգի մասնագետի առաջարկությունը՝
որոշում եմ.

1.Ռոբերտ Արամայիսի Խառատյանին,Զինաիդա Ռոբերտի Խառատյանին, Արման Ռոբերտի Խառատյանին,Ռուզաննա Երջանիկի Աղաբեկյանին և Զոհրաբ Ռոբերտի Խառատյանին բաժնային սեփականության իրավունքով պատկանող բնակելի տան և զբաղեցրած 0,15575 հա մակերեսով բնակելի կառուցապատման հողամասը /ծած.՝06-035-0073-0016/ վերաբաժանել երկու գույքային միավորի՝

2.Ռոբերտ Արամայիսի Խառատյանին,Զինաիդա Ռոբերտի Խառատյանին, Արման Ռոբերտի Խառատյանին,Ռուզաննա Երջանիկի Աղաբեկյանին և Զոհրաբ Ռոբերտի Խառատյանին բաժնային սեփականության իրավունքով պատկանող բնակելի տան և զբաղեցրած 0,13618 հա մակերեսով բնակելի կառուցապատման հողամասին տրամադրել 26-րդ փողոց 2-րդ փակուղի 4 բնակելի տուն հասցե:

3.Ռոբերտ Արամայիսի Խառատյանին,Զինաիդա Ռոբերտի Խառատյանին, Արման Ռոբերտի Խառատյանին,Ռուզաննա Երջանիկի Աղաբեկյանին և Զոհրաբ Ռոբերտի Խառատյանին բաժնային սեփականության իրավունքով պատկանող զբաղեցրած 0,01957 հա մակերեսով բնակելի կառուցապատման հողամասին տրամադրել 26-րդ փողոց 2-րդ փակուղի 4/1 հողամաս հասցե:

2.Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ**

2022 թ. սեպտեմբերի 26
ք.Թումանյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.city@mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2022թվականի N 273-Ա

## ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >>ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով ,Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 1-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով և հիմք ընդունելով <<ՎՈԼԻՈՍ նախագծային ինստիտուտ>> ՓԲԸ-ի տնօրեն Ա. Շահինյանի 19.09.2022թ. թիվ ՎՆ-ՇԹ-1242 գրությունը՝

Որոշում եմ.

1.Բավարարել <<ՎՈԼԻՈՍ նախագծային ինստիտուտ>> ՓԲԸ-ի տնօրեն Ա.Շահինյանի գրությունը՝ Թումանյան համայնքի Դսեղ բնակավայրի 6-րդ փողոց 91 հասցեում Հայկ Քոչարյանին պատկանող 0.4 կՎ էլեկտրամատակարարման 8257-ԷՄ օբյեկտի հետագծի աշխատանքների կատարման համար և տալ շինարարության թույլտվություն:

2.Շինարարական աշխատանքները սկսել համայնքապետարանի կողմից տրամադրված շինարարության թույլտվության առկայության դեպքում:

3.Համայնքապետարանի բյուջե վճարել 15000 դրամ:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ**

2022թ. սեպտեմբերի 26
ք.Թումանյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.city@mail.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2022թվականի N 274-Ա

## ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴՍԵՂ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ,ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԱՐԵԼԱՀՈՂԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով,10.06.2008թ.<<Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> ՀՕ -117-Ն օրենքով,ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման 29-րդ կետի գ) ենթակետով,ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի 2021թ. մայիսի 10-ի <<Անշարժ գույքի հասցեավորման հայտի ձևը սահմանելու մասին>> N 104-Լ հրամանով, ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 8-րդ կետի պահանջներով, ինչպես նաև հաշվի առնելով, որ հողատարածքը չի գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում,չի հակասում քաղաքաշինական նորմերին,չի առաջացնում սերվիտուտ, հիմք ընդունելով Դսեղ գյուղի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 22 ապրիլի 1991թ. N 6 արձանագրության քաղվածքները, <<ՏՍ-ՌԻԵԼԹԻ>> անշարժ գուլքի գործակալության կողմից տրված հողամասի և շինության հատակագծերը,ժառանգության իրավունքի վկայագրերը՝գործ N281,282 (սեղանամատյան՝3804,3805,3806,) և Դսեղ գյուղի բնակիչ Ջիվան Զարմայիլի Ղուլինյանի /մուտք՝ 22.09.2022թ. թիվ 652/ դիմումը՝

Որոշում եմ.

1. Վերականգնել և ճանաչել Ջիվան Զարմայիլի Ղուլինյանի /ծնված՝ 08.02.1958թ./, Արմեն Ջիվանի Ղուլինյանի /ծնված՝ 19.08.1982թ./,Բեժան Ջիվանի Ղուլինյանի /ծնված՝ 04.12.1979թ./ համատեղ բաժնային սեփականության իրավունքը Թումանյան համայնք,գյուղ Դսեղ, փողոց 2, թիվ 24 հասցեում գտնվող 06-035-0002-0021 ծածկագրում գտնվող 112.3 քմ մակերեսով բնակելի տան,48քմ կիսանկուղի,13,4քմ մառանի,22,7քմ գոմի և 0,225 հա մակերեսով տնամերձ հողամասի նկատմամբ:

2 Վերականգնել և ճանաչել Ջիվան Զարմայիլի Ղուլինյանի /ծնված՝ 08.02.1958թ./, Արմեն Ջիվանի Ղուլինյանի /ծնված՝ 19.08.1982թ./, Բեժան Ջիվանի Ղուլինյանի /ծնված՝ 04.12.1979թ./համատեղ բաժնային սեփականության իրավունքը Թումանյան համայնք, գյուղ Դսեղում գտնվող 06-035-0135-0087 ծածկագրով 0.31652 հա մակերեսով վարելահողի նկատմամբ:

3. Վերականգնել և ճանաչել Ջիվան Զարմայիլի Ղուլինյանի /ծնված 08.02.1958թ./,Արմեն Ջիվանի Ղուլինյանի /ծնված՝ 19.08.1982թ./, Բեժան Ջիվանի Ղուլինյանի /ծնված՝ 04.12.1979թ./ համատեղ բաժնային սեփականության իրավունքը Թումանյան համայնք,գյուղ Դսեղում գտնվող 06-035-0109-0075 ծածկագրով 0.65184 հա մակերեսով վարելահողի նկատմամբ:

4.Վերականգնել և ճանաչել Ջիվան Զարմայիլի Ղուլինյանի /ծնված՝ 08.02.1958թ./, Արմեն Ջիվանի Ղուլինյանի /ծնված՝ 19.08.1982թ./,Բեժան Ջիվանի Ղուլինյանի /ծնված՝ 04.12.1979թ./ համատեղ բաժնային սեփականության իրավունքը Թումանյան համայնք,գյուղ Դսեղում գտնվող 06-035-0108-0076 ծածկագրով 0.33378 հա մակերեսով վարելահողի նկատմամբ:

5.Վերականգնել և ճանաչել Ջիվան Զարմայիլի Ղուլինյանի /ծնված՝ 08.02.1958թ./, Արմեն Ջիվանի Ղուլինյանի /ծնված՝ 19.08.1982թ./, Բեժան Ջիվանի Ղուլինյանի /ծնված՝ 04.12.1979թ./ համատեղ բաժնային սեփականության իրավունքը Թումանյան համայնք, գյուղ Դսեղում գտնվող 06-035-0136-0048 ծածկագրով 0.31652 հա մակերեսով վարելահողի նկատմամբ:

6.Բնակելի տանը և զբաղեցրած հողամասին տրամադրել նոր փոստային <<ՀՀ Լոռու մարզ,Թումանյան համայնք,գ. Դսեղ, 2-րդ փողոց 24 բնակելի տուն>> հասցե

7. Հողամասերի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծերով:

8. Բնակելի տունը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահանջվող շահերը, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ,կառուցված չէառանց քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով,հողամասը չի գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:

9. Սույն որոշումն ենթակա է պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի աշխատակազմի Լոռու մարզային ստորաբաժանումում:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ**

2022թ. սեպտեմբերի 27
ք.Թումանյան